

## **Դելֆի ՄՊԸ-ն ընդդեմ Էստոնիայի**

(գանգատ թիվ՝ 64569/09)

Մեծ պալատի 2015 թվականի հունիսի 6-ի վճիռ

---

### **Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետ**

#### ***Տեղեկություն տարածելու ազատություն***

Վնասների հատուցում՝ ինտերնետային լրատվական պորտալի կողմից իր կայքում երրորդ անանուն անձանց կողմից վիրավորական մեկնաբանությունների գրառման համար: *Խախտում չի ճանաչվել:*

#### ***Փաստերը***

Դիմումատու ընկերությունը Էստոնիայում գործող խոշորագույն ինտերնետային լրատվական պորտալներից մեկի սեփականատեր էր: 2006 թվականին դիմումատու ընկերության պորտալում հրապարակվել է լաստանավային ընկերությանը վերաբերող հոդված: Հոդվածի հետ կապված երրորդ անանուն անձանց կողմից արվել են լաստանավային ընկերության տնօրենին ուղղված անձնական վիրավորանք պարունակող մեկնաբանություններ: Դիմումատու ընկերության դեմ ներպետական դատարանում հարուցվել է գրպարտության վարույթ, որի արդյունքում վերջինս պարտավորվել է պատճառած վնասների համար վճարել 320 եվրո:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պալատը 2013 թվականի հոկտեմբերի 10-ի վճռով Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում չի արձանագրել:

2014 թվականի փետրվարի 17-ին դիմումատու ընկերությունը վճիռը բողոքարկել է Եվրոպական դատարանի մեծ պալատ:

### *Իրավունքը՝ Կոնվենցիայի 10-րդ հոդված*

Սույն գործով Եվրոպական դատարանն առաջին անգամ քննության է առել ինտերնետային գործունեության հետ կապված բողոք: Կարևորելով ինտերնետային աշխարհում խոսքի ազատության դրական ազդեցությունը՝ Եվրոպական դատարանը վերահաստատել է, որ գրպարտության կամ այլ տեսակ վիրավորական արտահայտությունների համար պատասխանատվությունը, ըստ էության, պետք է արդյունավետ միջոց լինի անձնական իրավունքների խախտման համար: Բացի այդ, Եվրոպական դատարանն արձանագրել է, որ քննվող գործում վիճարկվող մեկնաբանությունները ատելություն և բռնություն հրահրող կոչեր էին պարունակում, դիմումատու ընկերության լրատվական պորտալը երկրում ինտերնետային մամուլում առաջատար դիրք էր զբաղեցնում, ինչպես նաև վիճարկվող մեկնաբանությունների շուրջ առկա էր հասարակական մտահոգություն: Ուստի, Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետի լույսի ներքո սույն գործի ուսումնասիրությունը սահմանափակվել է միայն ինտերնետային լրատվական պորտալի «պարտականությունների և պատասխանատվության» գնահատմամբ՝ այնքանով, որքանով վերջինս, տնտեսական շահ հետապնդելով, ստեղծել է պորտալ, որտեղ հնարավորություն է ընձեռել օգտատերերին մեկնաբանություններ թողնել նախկինում հրապարակված նյութերի վերաբերյալ, և մի շարք օգտատերեր օգտագործել են վիրավորական արտահայտություններ իրենց մեկնաբանություններում:

Եվրոպական դատարանը ողջունելի է համարել այն, որ ներպետական օրենսդրության համաձայն՝ նյութական շահ հետապնդող լրատվական պորտալը սկզբունքորեն կարող էր պատասխանատվության ենթարկվել ինտերնետային պորտալում տեղադրված բացահայտ վիրավորական մեկնաբանությունների համար: Որպես հոդվածը պաշտոնապես հրապարակող՝ դիմումատու ընկերությունը փաստացի հնարավորություն է ունեցել գնահատել բոլոր ռիսկերը, ինչպես նաև կանխատեսել իրավական հնարավոր հետևանքները: Այս հանգամանքները հաշվի առնելով՝ Եվրոպական դատարանը համարել է, որ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի շրջանակներում միջամտությունը եղել է օրենքով սահմանված կարգով:

Ինչ վերաբերում է միջամտության անհրաժեշտությանը դիմումատու ընկերության գործունեությանը՝ կապված վերջինիս կողմից տեղեկություն տարածելու ազատության հետ, ապա Եվրոպական դատարանը ուշադրություն է հրավիրում դիմումատու ընկերությանը պատկանող լրատվական պորտալի պրոֆեսիոնալ և նյութական շահ հետապնդող բնույթին, ինչպես նաև մեկնաբանությունները տեղադրելու հարցում տնտեսական շահ ունենալու փաստերին: Ավելին, միայն դիմումատու ընկերությունն է ունեցել այնպիսի տեխնիկական միջոցներ, որոնք վերջինիս հնարավորություն են տվել վերահսկելու լրատվական պորտալում տեղադրված ցանկացած հրապարակմանը վերաբերող մեկնաբանությունները՝ դրանք փոփոխելու կամ ջնջելու միջոցով: Սրան հակառակ՝ դիմումատու ընկերությունը պնդել է, որ իր ներգրավվածությունը ցանկացած հրապարակմանն առնչվող մեկնաբանությունները հանրային դարձնելու հարցում կրում է միայն տեխնիկական բնույթ:

Ինչ վերաբերում է մեկնաբանությունների հեղինակների պատասխանատվության հարցին, ապա դա կարող էր լինել հակընդեմ պատասխանատվության տեսքով: Սակայն Եվրոպական դատարանը հիշեցնում է, որ ինտերնետային աշխարհում օգտատերերի անանունությունը բավական կարևոր արժեք է, որը պետք է հավասարակշռվի մյուս իրավունքների և շահերի հետ: Շատ ավելի ողջամիտ կլինի, որ ինտերնետ օգտատերերը չբացահայտեն իրենց ինքնությունը, քանի որ, թերևս դրա արդյունքում երբեմն կարող են և առաջանալ բացասական հետևանքներ, հատկապես ինտերնետային պորտալի համար:

Այս կապակցությամբ Եվրոպական դատարանը մատնանշել է Եվրոպական միության դատարանի կայացրած մի որոշում, որում արձանագրվել է, որ անհատի հիմնարար իրավունքները, որպես կանոն, ստորադասվում են ինտերնետում որոնման օպերատորի և ինտերնետային այլ օգտատերերի շահերի: Ավելին, ինտերնետը թույլատրում է օգտատերերի անանունության տարբեր աստիճաններ, երբեմն թույլ տալով, որ միայն ինտերնետ-պրովայդերների համար հասանելի լինի օգտատիրոջ ինքնությունը:

Ինչ վերաբերում է դիմումատու ընկերության ձեռնարկված միջացառումներին առ այն, որ վիրավորական մեկնաբանությունները չհրապարակվեն, ապա պետք է նշել, որ

այս ոլորտում խոշոր լրատվական պորտալն ատելության խոսքի, ինչպես նաև բռնություն հրահրող կոչերի տարածումը սահմանափակելու համար արդյունավետ միջոցներ ձեռնարկելու պարտականություն ունի, քանի որ դրանք չեն հավասարեցվում «մասնավոր քննադատությանը»:

Փաստացի, վիրավորական մեկնաբանություններից տուժած պոտենցիալ գոհի հնարավորությունը կանխելու նման մեկնաբանությունների տարածումը շատ ավելի սահմանափակ է, քան մեծ առևտրային լրատվական ըկերության հնարավորությունը: Չնայած դիմումատու ընկերության վեբ կայքում առկա մի շարք մեխանիզմների առկայությանը, որոնց օգնությամբ հնարավոր էր կանխել ատելության խոսքի կամ վիրավորանք պարունակող մեկնաբանությունների տարածումը՝ ի պաշտպանություն բոլոր շահառուների իրավունքների և շահերի հավասարակշռված պաշտպանության, սույն գործում այդ պաշտպանությունը առկա չի եղել, քանի որ վիրավորական մեկնաբանությունները վեց շաբաթ շարունակ եղել են առցանց:

Ի վերջո, ներպետական դատարանի կողմից դիմումատու ընկերության վրա դրված 320 եվրոյի սանկցիան որոշ առումներով անգամ անհամաչափ է: Նաև ակնհայտ է, որ ներպետական դատավարության արդյունքում դիմումատու ընկերությունը ստիպված չի եղել փոխել իր գործունեության ձևը: Վերոշարադրյալից միանշանակ բխում է, որ ներպետական դատարանների կողմից նշանակված պատասխանատվությունը բավականաչափ հիմնավորված է եղել և անհամաչափորեն չի սահմանափակել նրա խոսքի ազատության՝ Կոնվենցիայով երաշխավորված իրավունքը:

*Եզրակացություն:* Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում չի արձանագրվել (տասնհինգ ձայն ընդդեմ երկուսի):